

ՍԱՆՄԱՍՆԵՐ
ԱՆՉՆԵԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ
ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

ՄԱՍԿ Գ. - Սաղմուն 47-69



Թարգմանեց ու խմբագրեց՝
ՄԱՇՏՈՑ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղապարեան

ՍԱՂՄՈՍԱՐԱՆԸ
ԱՆՁՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՅ
ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

ՍԱՂՄՈՍ 47 [46]

Աստուած ամբողջ երկրի Թագաւորն է

- Կցորդ. Համբաւանում եմ իմ Հօր մօտ եւ յեր Հօր մօտ,
իմ Աստուծոյ մօտ եւ յեր Աստուծոյ մօտ (Յվհ 20, 17):
- Կամ. Եթէ դու՛ն պարկանում է՛ն Քրիստոսին,
ուրեմն դու՛ն Աբրահամի սերունդն է՛ն (Գղտ 3, 29):
- Կամ. Միայն մէկ Աստուած, Բոլորի Հայրը,
Գերի՛ն է Բոլորից եւ Բոլորի մէջ է (Հմմտ. Եփս 4, 6):
- Կամ. Նորան, որ նստում է Գահի վրայ, եւ Գահանը
Գովէ, պարի՛ն, փառէ՛ն եւ իշխանութի՛նն (Յյս 5, 13):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Կորիսի որդիներին: Սաղմոս:**

² Ծափահարեցէք, ժողովուրդներ բոլոր,
աղաղակեցէք առ Աստուած ուրախութեան ձայնով.

³ որովհետեւ Տէրը Բարձրեալն է, Ահարկուն,
ամբողջ երկրի մեծ Թագաւորը:

⁴ Ժողովուրդներին ենթարկում է մեզ,
հեթանոսներին՝ մեր ոտքերի ներքոյ.

⁵ Նա ընտրում է մեզ համար մեր ժառանգութիւնը,
Յակոբի պանծանքը, որ Նա սիրում է:

⁶ Համբաւում է Աստուած աղաղակների ուղեկցութեամբ,
Տէրը՝ եղջիւրի հնչմամբ.

⁷ սաղմոս ասացէք մեր Աստուծոյ համար, սաղմոս ասացէք,
սաղմոս ասացէք մեր Թագաւորի համար, սաղմոս ասացէք:

⁸ Աստուած ամբողջ երկրի Թագաւորն է,
սաղմոս ասացէք Նրան իմաստութեամբ.

⁹ Աստուած թագաւորում է բոլոր հեթանոսների վրայ,
Աստուած բազմում է սրբութեան իր գահի վրայ:

¹⁰ Ժողովուրդների գլխաւորները հաւաքւում են,
ահա Աբրահամի Աստուծոյ ժողովուրդը.

Աստուծուն է պատկանում երկրի իշխանութիւնը,
Նա բարձրանում է բոլորի վրայ:



Կցորդ. Այս ժայռի վրայ կը կառուցեմ իմ Անկեղեցին

եւ գոթիկի գուները շէն յաղթի նրան (Մտթ 16, 18):

Կամ. Քաղաքի պարիսպներն ունեն քասներկո- Հիմէր ,

որոնց վրայ Գրո-աթ են քասներկո- Առաքեալներն անունները (Հմմտ. Յյտ 21, 14):

¹ **Երգ: Սաղմոս: Կորխի որդիների:**

² Մեծ է Տէրը եւ ամէն գովքի արժանի.

մեր Աստծոյ քաղաքում,

³ Իր Սրբութեան լեռան վրայ, հիանալի բարձունքում է
երկրի ուրախութիւնը:

Սիրն լեռը երկրի բեկուն է,

քաղաքն է մեծ Թագաւորի.

⁴ Աստուած յայտնուում է նրա օթեկաններում,

որպէս անխորտակելի ապաստան:

⁵ Ահա, Թագաւորները ի մի էին հաւաքուել,

միասին յառաջանում էին.

⁶ հազիւ թէ տեսան, սարսափեցին,

վախեցած փախան դնացին:

⁷ Այնտեղ նրանք ահով բռնուեցին,

ծննդկանի երկունքի նման.

⁸ Ինչպէս արեւելեան քամին,

երբ փչում է Թարսիսի նաւերը:

⁹ Ինչպէս լսել էինք, այնպէս էլ տեսանք Տիրոջ քաղաքում,

տիեզերքի Աստծոյ քաղաքում,

որի հիմքը Աստուած ինքը դրել է յաւիտեան:

¹⁰ Ո՛վ Աստուած, վերապրում ենք Քո սէրը,

բնակավայրիդ ներսում.

¹¹ Քո Անունը եւ Քո գովքը, ո՛վ Աստուած,

մինչեւ երկրի սահմաններն են:

Քո աջը յորդում է արդարութեամբ,

¹² բերկրում է Սիրն լեռը.

ցնծում են Յուդայի քաղաքները

Քո վճիռների համար:

¹³ Պատուէք եւ կրկին պատուէք Սիրնի չորսկողմը,

հաշուեցէք նրա աշտարակները.

¹⁴ երկար դիտեցէք նրա պարիսպները,

այցելէք նրա տները.

որպէսզի պատմէք ապագայ սերնդին.

¹⁵ «Ահա Աստուած, մեր Աստուածը»,

Նա է՝ որ միշտ առաջնորդում է մեզ
մահից այն կողմ:



ՄԱՂԱՌՈՒ 49 [48]

Աստուած կ'ազատի իմ կեանքը

Կցորդ. Ու շինչ շենժ Բերեւայա աշխարհ

Ե- ու շինչ եւ շենժ կարող քանեւայա աշխարհից (1Տմ 6, 7):

Կամ. Գ- ու առ- մ ես. « Հարս քայելեմ » ,

Բայց շփոթեա՝ որ իշտ- առ մեկն ես (Հմմտ. Յյտ 3, 17):

Կամ. Ձեզնից ո՞վ, որ խառն ելյո՞ւնի,

կարող է միայն մեկ ժամ ա- եւայնեւ իր կեանքին (Հմմտ. Ղկս 12, 25):

Կամ. Մոյնիսկ եթէ մեկը առաքո- թեան մեջ է,

իր կեանքը կախո- մ շո- նի իր ո- նեցո- աթէնեթից (Հմմտ. Ղկս 12, 15):

Կամ. Ի՞նչ օգո- ր ո- նի մարդո- նն ամբողջ աշխարհը շահելը :

Ի՞նչ կը քայ մարդը իր կեանքի փոխարէն (Հմմտ. Մտթ 16, 26):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Կորիսի որդիների: Սաղմոս:**

² Լսեցէք սա, ժողովուրդներ բոլոր,

լսեցէք, աշխարհի բնակիչներ,

³ Աղամի որդիներ, մահկանացու մարդիկ,
հարուստներ եւ աղքատներ ի միասին:

⁴ Բերանս արտասանում է իմաստութիւն,

սիրտս գործադրում է կշռադատութիւն.

⁵ սկանջա ու շաղիբ է ասացուածքներին,
տաւիղի վրայ ներկայացնում եմ իմ առակը:

⁶ Ինչո՞ւ պիտի վախենամ տրտմութեան օրերում,
երբ անօրէնների հարութիւնը չըջապատում է ինձ.

⁷ յոյսները դրել են իրենց հարստութիւնների վրայ,
պարծենում են մեծամեծ ունեցուածքներով:

⁸ Ազատագրե՞լ, ազատագրե՞լ սեփական եղբօրը,
մարդկանցից ոչ ոք չի կարող դա անել.

Աստծուն հնարաւոր չէ վճարել փրկութիւնը,

⁹ կեանքն ազատագրման գին չունի,
միշտ անբաւական է՝ յաւիտեան ապրելու համար:

¹⁰ Մի՞թէ կարող է ապրել անվախճան, ընդմիշտ,
առանց տեսնելու գերեզմանը,

¹¹ մինչ տեսնում ենք մահը նաեւ իմաստունների.
մեռնում են յիմարներն ու պակասամիտները,
ուրիշներին թողնելով իրենց հարստութիւնները:

¹² Գերեզմանները նրանց տներն են յաւիտեան,
նրանց բնակավայրը՝ սերնդէ սերունդ,
թէեւ իրենց անուներով էին կոչուած երկիրները:

¹³ Մարդը բարօրրութեան մէջ չի տեւում,
անասունների նման է, որ մեռնում են:



¹⁴ Ահա վախճանը նրա՝ ով վստահում է ինքն իրեն,
ճակատագիրը նրա՝ ով սիրում է լսել սեփական ձայնը.

¹⁵ երամակների նման ուղարկուած են դժոխք,
մահն է լինելու նրանց հովիւր:

Նրանց վրայ տիրելու են արդարները,
նրանց կերպարանքը անհետանալու է
դժոխքում՝ իրենց բնակավայրում.

¹⁶ բայց Աստուած կ'ազատի իմ կեանքը,
կը խլի ինձ դժոխքի ձեռքից:

¹⁷ Մի՛ վախեցիր, եթէ մարդ հարստանում է,
եթէ աճում բազմանում է նրա տան ճոխութիւնը.

¹⁸ երբ մեռնում է, ոչինչ չի տանում իր հետ,
իր յոգնութիւնը չի իջնում իր հետ:

¹⁹ Իր կեանքի ընթացքում օրհնում էր ինքն իրեն,
նրան գովում էին անարգել վերընթացի համար.

²⁰ այժմ հասնում է իր հայրերի սերունդին,
որոնք այլեւս երբեք չեն տեսնում լոյսը:

²¹ Մարդը բարօրրութեան մէջ չի կշռադատում,
անասունների նման է, որ մեռնում են:



ԱՊՂԱՌԱ 50 [49]

Աստուծոյն մատուցուած զոհը երախտագիտութիւնն է

Կցորդ. Ամբողջ Օրենքն իր լիութեամբ ամփոփուած է այս մեկ խօսքի մէջ.

Պիտի «իրե» (Հմմտ. Գղտ 5, 14):

Կամ. Սիրել Աստուծուն է սիրել մեր շահարեւին.

«աւելին արժէ՝ ինչքան որ ողջակեանքն ու զոհերը (Հմմտ. Մրկ 12, 33):

Կամ. Եթէ մեայն հասկացած լինելին՝ թէ ինչ է նշանակում.

« Ողորմութիւնն է մուսուլմանն ո՛չ թէ զոհ » (Մտթ 12, 7):

Կամ. Ով վարկաբեկում կամ դատարան է եղբօրը,

վարկաբեկում է դատարանն է Օրենքը (Հմմտ. Յկբ 4, 11):

Կամ. Աստուած հաստատել է մի օր,

որում արդարութեամբ դատարանն է աշխարհը (Հմմտ. Գրծ 17, 31):

Կամ. Յիշիր այն՝ ինչ լսեցիր է դատարանն.

Եթէ արեւն չէս, կը Գամ ինչպէս Գող (Հմմտ. Յյտ 3, 3):

¹ *Մաղմոս: Ասափի:*

Աստուած, որ Աստուած է, Տէրը
պատրաստուում է խօսելու եւ ժողովի կանչելու երկիրը
արեւելքից, ուր ծնւում է արեւը,
մինչեւ արեւմուտք, ուր արեւն իջնում է:

² Սիրնից, կատարեալ գեղեցկութիւն, Աստուած փայլում է,

³ մեր Աստուածը գալիս է եւ չի լռում.

լափող կրակ է Նրան նախորդում,
Նրան շրջապատում է մի սաստիկ մրրիկ.

⁴ Ի վերուստ կանչում է երկինքն ու երկիրը,
դատաստանի մտնելու համար Իր ժողովուրդի դէմ:

⁵ «Իմ առջեւ հաւաքեցէք Իմ հաւատացեալներին,
որոնք զոհի մատուցմամբ կնքեցին Իմ դաշինքը»:

⁶ Երկինքը հռչակում է Նրա արդարութիւնը,
այո՛, Աստուած Ինքն է դատաւորը:



⁷ «Լսիր, ժողովուրդ Իմ, կամենում եմ խօսել,
վկայելու եմ քո դէմ, Իսրայէլ.
Ես եմ Աստուած, քո Աստուածը:

⁸ Չեմ յանդիմանում քեզ զոհերիդ համար,
քո ողջակէզները միշտ Իմ առջեւ են.

⁹ չեմ վերցնում քո տան հորթուկները,
եւ ոչ էլ քո փարախների այծերը:

¹⁰ Դաշտի կենդանիներն Իմն են,
հազարաւոր հօտեր ունեմ լեռների վրայ.

¹¹ ճանաչում եմ սարերի բոլոր թռչուններին,
հովիտների գազաններն Իմն են:

¹² Եթէ քաղցած լինէի, քեզ չէի ասի,
Իմն է աշխարհն ու իր լիութիւնը.

¹³ մի՞թէ ես հորթի միս եմ ուտում,
մի՞թէ խմում եմ այծերի արիւնը:

¹⁴ Երախտագիտութեան զոհ մատուցիր Աստծուն,
Բարձրեալի առաջ կատարիր խոստումներդ.

¹⁵ կանչիր ինձ տրտմութեան օրը,
կ'ազատեմ քեզ եւ դու կը փառաբանես ինձ»:

¹⁶ Բայց մեղաւորին Աստուած յայտարարում է.
«Ինչո՞ւ ես դու կրկնում Իմ պատուիրանները
եւ շուրթերիդ վրայ պահում Իմ դաշինքը.

¹⁷ բայց յետոյ ատում ես կանոնապահութիւնը
եւ թիկունքիդ ետեւն ես նետում Իմ խօսքերը:

¹⁸ Եթէ մի գող ես տեսնում, վազում ես նրա հետ,
պոռնկացողների հետ է քո ընկերութիւնը.

¹⁹ Հարիքին ես յանձնում քո բերանը,
լեզուդ զուգաւորում է կեղծիքի հետ:

²⁰ Երբ նստում ես, վարկաբեկում ես եղբօրդ
եւ արհամարհում ես քո մօր որդիներին.

²¹ Եթէ դու այսպէս ես վարում, մի՞թէ պէտք է լռեմ,
մի՞թէ կարծում ես՝ թէ ես էլ քո նման եմ.
ահա՛ քեզ ուղղուած իմ մեղադրանքն ու դատապարտութիւնը:

²² Թող սա հասկանայ՝ ով մոռանում է Աստծուն,
այլապէս՝ կը հարուածեմ առանց փրկութեան ելք թողնելու.

²³ ով երախտագիտութեան զոհ է մատուցում, ինձ փառաբանում է,
նրա ճանապարհում կը բացայայտեմ Աստծոյ փրկութիւնը»:



ՍԱՂԱՌՈՒ 51 [50]

Մաքուր սիրտ ստեղծիր ինձնում, Աստուած

Կցորդ. Մա՛նասօրը ցո՛ւն վերադարձա՛ն արդարացած ,
որ՞ով՛եղբե՛ն ո՛վ խոնարհու՛մ է՝ կը Թարձրացո՛ւի (Հմմտ. Ղկս 18, 14):

Կամ. Տե՛ր, ել՛նէ կամենաս , կարող ես Թժշկելնն՛ն (Մտթ 8, 2):

Կամ. Մեղանշեցի՛ երկն՛ի եւ Քո՛ պեմ,
այլե՛ս արժանի չեմ կոչու՛ելու Քո՛ որդին (Ղկս 15, 21):

Կամ. Ասորու՛ս, ողորմի՛ր ինն՛ , որ՞ով՛եղբե՛ն մեղա՛սր եմ ես (Հմմտ. Ղկս 18, 13):

Կամ. Ել՛նէ ասու՛մ են՛ի՛ ինչ ասանց մեղ՛ի են՛ի ,
խաթո՛ւմ են՛ի ինչնե՛րս մեղ՛եւ ճշմարտո՛ւթիւնը մեղնո՛ւմ չե (1Յվհ 1, 8):

Կամ. Ել՛նէ խոսքո՛վանո՛ւմ են՛ի՛ մեր մեղ՛ի երբ ,
Սա կը մա՛վրի մեղ՛ա մէն անարդարո՛ւթիւնից (Հմմտ. 1Յվհ 1, 9):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Սաղմոս: Գալթի:**

² **Երբ իր մօտ եկաւ Նաթան մարգարէն, Բերսաբէի մօտ իր մտնելուց յետոյ:**

³ Ողորմիր ինձ, Աստուած, սիրոյդ համաձայն,
ըստ Քո մեծ ողորմութեան՝ ջնջիր իմ մեղքը.

⁴ Եւ լուա ինձ իմ բոլոր յանցանքներից,
ամէն ամբարշտութիւնից մաքրիր անձս:

⁵ Այո՛, ես ընդունում եմ իմ մեղքը,
սխալս միշտ իմ առջեւ եմ.

⁶ Քո դէմ, միայն Քո դէմ մեղանշեցի,
այն՝ ինչը որ չար է Քո առջ, ես կատարեցի:

Այո՛, Դու արդար ես, երբ խօսում ես,
երբ դատում ես, միշտ արդարացի ես.

⁷ Եւ հա, յանցանքի մէջ եմ ծնուել,
որպէս մեղաւոր յղացաւ ինձ իմ մայրը:

⁸ Բայց Դու ճշմարտութիւնն ես ուզում իմ սրտի ներսում,
խորութիւններում՝ ուսուցանում ես ինձ իմաստութիւնը.

⁹ ցօղիր ինձ զօպայով եւ մաքուր կը լինեմ,
լուսայ ինձ եւ ձիւնից աւելի սպիտակ կը լինեմ:

¹⁰ Տուր ինձ զգալ բերկրանքն ու ուրախութիւնը,
կը ցնծան ոսկորները, որոնք նուաղեցրիր.

¹¹ սխալներիցս կտրիր հայեացքդ
եւ ջնջիր իմ բոլոր յանցանքները:

¹² Ստեղծիր ինձնում, ո՛վ Աստուած, մի մաքուր սիրտ,
վերանորոգիր ինձնում հաստատուն հոգի.

¹³ Դէմքիցդ հեռու մի՛ վտարիր ինձ,
ետ մի՛ վերցրու Քո սուրբ Հոգին:

¹⁴ Վերստին պարգեւիր ինձ փրկութեանդ ուրախութիւնը,
վճռակամ ոգիով թիկունք կանգնիր ինձ.

¹⁵ մոլորուածներին կ'ուսուցանեմ Քո ճանապարհները,
մեղաւորները կը վերադառնան դէպի Քեզ, Աստուած:

¹⁶ Արիւն հեղելուց պահիր ինձ, փրկութեան իմ Աստուած,
եւ լեզուս կը հռչակի Քո արդարութիւնը.

¹⁷ Տէր, բացիր իմ շրթունքները
եւ բերանս կ'երգի Քո գովասանքը:

¹⁸ Եթէ զոհ եմ մատուցում Քեզ, չես կամենում,
ողջակէզներ, բայց չես հաճում դրանց.

¹⁹ Աստծոյ համար զոհ է զղջացած հոգին,
խոնարհուած եւ տառապած հոգին Դու չես մերժում, Աստուած:

²⁰ Սիրոյդ համաձայն՝ շնորհ արա Սիրոնին,
վերստին բարձրացրու Երուսաղէմի պարիսպները.

²¹ հաճոյքով կ'ընդունես արդարութեան զոհերը, ընծաներն ու ողջակէզները,
պատարագները՝ խորանիդ վրայ մատուցուած:



ՍԱՂԱՄՈՒ 52 [51]

Անձս վստահում եմ Աստծոյ սիրոյն

Կցորդ. Լեզուն անօրէնութեան աշխարհն է,

ապականում է մարմինը եւ հրդեհում կէանէը (Հմմտ. Յկբ 3, 6):

Կամ. Դու՛ն է պարծենում է՛ն յեր Գոռուլութեամբ,

Բայց այս րեւակն ամէն պարծանէ անօրէնութիւնն է (Հմմտ. Յկբ 4, 16):

¹ Երգչախմբի ղեկավարի համար: Մասէի: Դաւթի:

² Երբ եկաւ Դովեկ Եդոմացին, պատմելու համար Սաուղին եւ նրան ասելու. «Դաւիթը մտել է Ափսնէլէի տունը»:

³ Ինչո՞ւ ես չարիքով պարծենում, ո՛վ բռնաւոր,
Աստուած հաւատարիմ է ամէն օր.

⁴ ածելիի նման սրուած լեզուդ
ոճիրներ է հրամայում, ո՛վ ստախօս:

⁵ Դու չարիքը նախընտրում ես բարիքին,
կեղծիքը՝ արդարութեանը.

⁶ Դու սիրում ես ամէն խօսք, որ քանդում է,
ո՛վ զրպարտող լեզու:

⁷ Բայց ահա Աստուած կը կործանի քեզ,
որջիցդ դուրս կը հանի, հիմքերդ խախտելու համար.
արմատախիլ կ'անի քեզ ողջերի երկրից,
կ'ոչնչացնի քեզ ընդմիշտ:

⁸ Արդարները, տեսնելով, երկնչելու են,
եւ ծիծաղելու են քո վրայ.

⁹ «Ահա մարդը, որ իրեն ապաւէն չընտրեց Աստծուն,
այլ վստահում էր իր մեծ հարստութեանը,
փբւում էր ոճիրի մէջ»:

¹⁰ Մինչդեռ ես, ինչպէս ամբողջովին կանաչ ձիթենի
Աստծոյ յարկերի ներքոյ,
անձս վստահում եմ Աստծոյ սիրոյն,
յաւիտեանս յաւիտենից:

¹¹ Ես ընդմիշտ երախտագիտութիւն եմ մատուցում Քեզ,
որովհետեւ գործում ես.
հաւատացեալներիդ առաջ յուսացել եմ Անուանդ,
որովհետեւ բարի է:



ՄԱՂԱՌՈՒ 53 [52]

Չկայ մէկը, որ բարիք գործի

Կցորդ. Բո՛լոր մարդիկ էլ մեղանշել են եւ զրկուել Աստծոյ փառո՛ւնց (Հմմտ. Հոմ 3, 23):

Կամ. Աշխարհի վերջո՛ւմ, Գալու՛ են Ըրեշտակները
եւ Բաժանելու՛ են շարերն արդարներից (Մտթ 13, 49):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: «Պարեր»ի վրայ: Մասիլ: Գայթի:**

² Անմիտն ասում է իր սրտում.
«Աստուած գոյութիւն չունի».
այլասերուած են եւ պղծութիւններ են գործում,
չկայ մէկը, որ բարիք գործի:

³ Բայց Աստուած դիտում է երկնքից,
զննում է մարդկանց.
տեսնելու համար՝ թէ կա՞յ մի իմաստուն,
կա՞յ արդեօք Աստծուն փնտռող մէկը:

⁴ Բոլորն էլ շեղուել են ճանապարհից,
ապականութեան մէջ միացած.
չկայ մէկը, որ բարիք գործի,
եւ ոչ իսկ մէկը:

⁵ Գիտակցութիւն չունե՞ն չարագործները,
որ լափում են իմ ժողովուրդը.
սա է հացը, որ ուտում են,
Աստծուն չհաւատալով:

⁶ Բայց ահա, սարսափը պատելու է նրանց,
առանց վախենալու պատճառ ունենալու.
որովհետեւ Աստուած ցրելու է քո վրայ յարձակողների ոսկորները,
դու ծիծաղելու ես. «Աստուած նրանց յաղթեց»:

⁷ Ո՞վ կը տայ Իսրայէլին փրկութիւնը,
որ դալիս է Սիրիից.
երբ կը վերադառնայ մեր Աստուածը,
կը վերադառնայ Իր ժողովուրդը.
ուրախութիւնից պարելու է Յակոբը,
ցնծալու՝ Իսրայէլը:



ԱՊՂԱՌԱ 54 [53]

Աչքերս տեսան հակառակորդին

Կցորդ. Հարկաւոր է թաղում փորձնութիւնների մեջով անցնել,

Ասոր շոյ արվայութիւն մտնելու - Համար (Հմմտ. Գրծ 14, 22):

Կամ. Խաղաղութեան Ասորու-աշը

շոյ-դու կը ճզմի սասանային յեր ոտերի ներվոյ (Հում 16, 20):

Կամ. Տերն ինչ կ'ապարի թուր շարիվներից

ե- կը փրկի Իր երկնային արվայութեան Համար (2Տմ 4, 18):

Կամ. Ով ճանաչում է Ասոր շոյն,

նրա Համար մի շնորհ է վշտեր կրելը, անարդարացի օրէն աստուայելով (1 Պտ 2, 19):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Լարային գործիչների վրայ:**

Մասիլ: Դաւթի:

² **Երբ զիփացիները եկան Սաուդի մօտ եւ նրան ասացին. «Դաւիթը թաւնուել է մեզ մօտ»:**

³ Փրկիր ինձ, ո՞վ Աստուած, Քո Անուան համար,
զօրութեամբդ՝ արդարութիւն արա ինձ.

⁴ ո՞վ Աստուած, լսիր իմ աղօթքը,

ուշադիր եղիր բերանիս խօսքերին:

⁵ Կռապաշտներ են ոտքի ելել իմ դէմ,
բռնաւորներ դաւում են իմ կեանքը,
ոչնչով հաշուի չեն առնում Աստծուն:

⁶ Բայց իմ համար Աստուած օգնութեան է հասնում,
Տէրը նրանց շարքում է, ովքեր պաշտպանում են ինձ.

⁷ Զարիքը վերադառնում է թշնամիներին վրայ,
Դու հաւատարմութեամբդ ցրում ես նրանց:

⁸ Ամբողջ սրտով զոհ պիտի մատուցեմ Քեզ,
պիտի գովեմ Անունդ, որ բարի է:

⁹ Տէրն ազատեց ինձ նեղութիւնից,
իմ աչքերը տեսան հակառակորդին:



ԱՊՂԱՌԱ 55 [54]

Կայ մէկը, որ խզել է Ուխտը

Կցորդ. Յիսուս սկսեց վախ ու արտահոսել զգացումներ. «Նոգին արտոնը է մահու շափ» (Հմմտ. Մրկ 14, 33-34):

Կամ. Յիսուս խոնվուեց Ընդունելու ասաց. «Զեպնից մէկը ինչ մարտնչու է» (Հմմտ. Յվհ 13, 21):

Կամ. Եղբայրը եղբօրը մահուան է մարտնչու
է-բուրբի կողմից արտոնելու էվ իմ Անուան պարճառով (Հմմտ. Մրկ 13, 12-13):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Լարային գործիչների վրայ:
Մասիլ: Գաթի:**

² Լսիր, ո՛վ Աստուած, աղօթքս,
մի՛ անտեսիր իմ աղաչանքը:

³ ուշադրութիւն դարձրու վրաս եւ պատասխանիր ինձ,
տխուր եմ, անձկութեամբ լի:

⁴ Խռովուել եմ թշնամու աղաղակից,
չարագործի նախատինքներից.
ամէն ոճիր բարդում են վրաս,
բարկութեամբ մեղադրում են ինձ:

⁵ Սիրտս գալարւում է ներսումս,
մահուան սարսափն է վրաս յարձակում:

⁶ Երկիւղն ու վախը ներթափանցում են իմ մէջ,
զարհուրանքը պատում է անձս:

⁷ Ասում եմ ինքս ինձ. «Ո՞վ կը տայ ինձ աղաւնու թեւեր,
կը թռչէի ապաստան գտնելու ինձ.

⁸ կը փախնէի հեռու, հեռո՛ւ,
անապատում կը հաստատէի բնակութիւնս.

⁹ աճապարանքով կը հասնէի մի ապաստանի,
կը թաքնուէի փոթորկալի քամուց»:

¹⁰ Շփոթութիւն դիր նրանց խօսուածքի մէջ,
ցիրուցան արա նրանց, Տէր.
միայն բռնութիւն ու անհամաձայնութիւններ եմ տեսնում
քաղաքի սրտում:

¹¹ Դրանք օր ու գիշեր չափում անցնում են
քաղաքի բոլոր պարիսպները:

Նրանում՝ ոճիր ու անարդարութիւն,
¹² նրա ծոցում՝ աւեր ու կործանում.
այլեւս չեն լքում նրա փողոցները
իշխանութեան գեղծումն ու խաբէութիւնը:

¹³ Եթէ թշնամի մէկը լինէր ինձ նախատողը,
կը կարողանայի կրել.
Եթէ ոսոխը դուրս գար իմ դէմ,
կը կարողանայի թաքնուել:

¹⁴ Բայց դու ես, մարդ, իմ ընկերը,
իմ մտերիմն ու խորհրդակիցը.

¹⁵ մի սերտ մտերմութիւն միացնում էր մեզ,
ճաշակում էինք նրա քաղցրութիւնը.
միասին համաձայն ընթանում էինք
Աստուծոյ օթեւանների ներսում:

¹⁶ Թող անակնկալ մահը յանկարծակիի բերի նրանց,
ողջ ողջ թող իջնեն դժոխք.
Քանի որ չարիքը նրանց տներում է,
լիուլի լցնում է նրանց ծոցը:



¹⁷ Իսկ ես աղաղակում եմ իմ Աստուծոյ,
Տէրը փրկում է ինձ.

¹⁸ Երեկոյեան, առաւօտեան, կէսօրին,
եւ հառաչում եմ ու լալիս:

Նա լսում է իմ աղօթքը,

¹⁹ վերստին խաղաղութիւն է պարգեւում ինձ.
ազատում է ինձ նրանցից՝ ովքեր մարտնչում են իմ դէմ,
իմ բոլոր թշնամիներից:

²⁰ Այո՛, Աստուած լսում է եւ պատասխանում,
Նա՛ որ թագաւորում է յաւէտ.
Քանի որ նրանց հոգիներում չկայ դարձ,
Աստուծոյ չեն երկնչում:

²¹ Կայ մէկը, որ իր ձեռքը տարածել է ընկերոջ դէմ,
խզել է Ուխտը.

²² ցոյց է տուել խաբէական մի դէմք,
բայց իր սիրտը պատերազմ էր.
Նրա խօսքերը զմայլելի էին, անուշահոտ բուրմունքից աւելի,
բայց դաշոյններ էին:

²³ Հոգսդ Տիրոջը յանձնիր
եւ Նա քեզ թիկունք կը կանգնի.
Նա երբեք չի կարող թոյլատրել
արդարի անկումը:

²⁴ Դու, ո՛վ Աստուած, նրանց գերեզման կ'իջեցնես,
արիւնահեղներին ու խաբեբաններին.

իրենց օրերի կէսին չեն հասնի,
բայց ես վստահում եմ Քեզ:



ՍԱՂԱՄՈՒ 56 [55]

Աստուծոյ խօսքն եմ ես երգում

Կցորդ. Մե՛ Վախեցէ՛ք նրանցից՝ ո՛վքեր «պանոս» են մարմինը,
Բայց չեն կարող պանել Ըոֆին (Մտթ 10, 28):

Կամ. Մենէ՛, որ ողջ ենէ՛, մշտապէս մահուան ենք որոսմ Յիսուսի Համար (2Կր 4, 11):

Կամ. Յայնժամ Ասորոսա՛ կը լինի Ասորոսա՛ նրանց - Ըեք,
Կը շորացնի նրանց աշխարհի արցունքները (Հմմտ. Յյտ 21, 3-4):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար:** «Հեռաւորների համար աղանձի»ի վրայ: **Դաւթի: Միգթամ: Երբ փղշտացիները նրան որպէս բանտարկեալ պահում էին Գէթում:**

² Աստուած, ողորմիր ինձ, կայ մէկը՝ որ ծուղակ է լարում իմ համար,
ամբողջ օրը յարձակում է վրաս ու չարչարում,

³ ամբողջ օրը կատաղում է ու վրաս նետում.

բայց վերեւում պատերազմ է մղում իմ համար,

⁴ եւ ես նեղութեան օրը

Քեզնում եմ հաստատում իմ վստահութիւնը:

⁵ Աստուծոյ խօսքն եմ ես երգում,

Աստուծուն եմ վստահում եւ չեմ վախենում.

ի՞նչ կարող է անել ինձ մահկանացուն:

⁶ Ամբողջ օրը խայթում են ինձ խօսքերով
եւ մտածում են չարիք անել ինձ.

⁷ գաղտնի հաւաքում են եւ լրտեսում իմ քայլերը,
եւ յոյսն ունեն վեջտեղից վերցնելու իմ կեանքը.

⁸ մի՞թէ խոսափելու են, ո՛վ Աստուած, այս ոճիրների պատժից,
Քո զայրոյթը թող գետնին հաւասարեցնի զօրութիւնները:

⁹ Հաշուեցիր իմ թափառումի քայլերը,
հաւաքեցիր արցունքներս մի անօթի մէջ,
եւ ամէն բան գրուած է Քո գրքում.

¹⁰ Թշնամիներս պէտք է ետ նահանջեն,
այն օրը՝ որում ես կը կանչեմ Քեզ
կ'իմանամ՝ որ Աստուած մօտ է ինձ:

¹¹ Աստուծոյ խօսքն եմ ես երգում,
եւ երգում եմ Տիրոջ խօսքը,

¹² Աստուծուն եմ վստահում եւ չեմ վախենում.
ի՞նչ կարող է անել ինձ մարդը:

¹³ Կատարում եմ, Աստուած, Քեզ տուած խոստումներս,
երախտագիտութիւն եմ մտուցելու Քեզ.

¹⁴ որովհետեւ մահից ազատեցիր կեանքս,

անկուճից պահեցիր ոտքերս,
ընթանալու համար երեսիդ առաջ,
կեանքի լոյսի մէջ, Աստուած:



ԱՊՂԱՌԱ 57 [56]

Փառքդ թող լցնի երկիրը

Կցորդ. Գո՛ւ՛՛՛, եղբայրներ, խա՛արի մէջ շէ՛՛՛,
այլընայն որդիներ ե՛՛՛ եւ ցեբեկո՛ւայ որդիներ (Հմմտ. 1Թս 5, 4-5):
Կամ. Այլե՛ս չնից արթնանալու ժամանակն է,
որ ո՛վհետեւ այժմ մեր վերջո՛ւթիւնն աւելի մօտիկ է (Հում 13, 11):

¹ **Երգչախումբի ղեկավարի համար: Մի՛ կործանիր: Գալթի: Մի՛գթամ:**
Երբ Սաուուդի առջեւից փախաւ քարանձաւ:

² Ողորմիր ինձ, ո՛վ Աստուած, ողորմիր ինձ,
որովհետեւ Քեզ եմ ես ապաւինում.
ապաւինում եմ թեւերիդ ներքոյ,
մինչեւ որ կ'անցնի ձախորդութիւնը:

³ Ես աղաղակում եմ Աստծուն, Բարձրեալին,
Աստծուն, որ ամէն բան անում է իմ համար,

⁴ Նա երկնքից առաքում է փրկութիւնը.
Թող ոչնչացնի ցանկութիւնը նրա՝ ով կամենում է լափել ինձ,
Թող Աստուած առաքի Իր շնորհն ու Իր ճշմարտութիւնը:

⁵ Ես բնակւում եմ առիւծներով շրջապատուած,
որոնք յօշոտում են մարդկային էակներին.
Նրանց ատամները նետեր են ու նիզակներ,
նրանց լեզուն՝ սրածայր սուր:

⁶ Երկնքից աւելի վեր բարձրացիր, Աստուած,
եւ թող Քո փառքը լցնի երկիրը:

⁷ Ցանց նետեցին ոտքերիս առաջ,
եւ ահա, ընկճուելու վրայ եմ ես.
առջեւս փոս փորեցին,
եւ ահա, իրենք են ընկնում նրա խորքը:

⁸ Իմ սիրտը հաստատուն է, ո՛վ Աստուած,
իմ սիրտը հաստատուն է,
ուզում եմ երգել եւ սաղմոս ասել:

⁹ Զարթնիր, ներաշխարհ իմ,
արթնացէք, տաւիղ ու քնար.
արթնացնելու եմ արշալոյսը:

¹⁰ Ժողովուրդների առաջ
երախտագիտութիւն եմ յայտնում Քեզ, Տէր,
ազգերի առաջ երգում եմ Քեզ.

¹¹ Քո սէրը երկնքից ակելի մեծ է,
Քո ճշմարտութիւնը՝ ամպերից ակելի վեր:

¹² Երկնքից ակելի վեր բարձրացիր, Աստուած,
եւ թող Քո փառքը լցնի երկիրը:



ԱՊՂԱՌՈՒ 58 [57]

Կայ մի Աստուած,
որ արդարութիւն է անում երկրի վրայ

Կցորդ. Մահը եւ դժոխքն են անբարեկամների կրակի լիճը:

Երկրորդ մահը կրակի լիճն է (Հմմտ. Յյտ 20, 14):

Կամ. Գաճաճ լիճ է մեր եղբայրներին զրպարհողը,

նա՝ որ զրպարհում էր նրանց Աստուծոյ առաջ (Հմմտ. Յյտ 12, 10):

Կամ. Օյեր, ի՞՞՞ թնոնքներ,

ինչպէ՞ս է՞ խոսակերտ՝ Գեւեանի դատարարութիւնից (Մտթ 23, 33):

Կամ. Մի՛ դատել արդարեւ կերպարանով ճամաճայն,

այլ դատել արդար դատարանով (Յվզ 7, 24):

Կամ. Մի՛ դատել ժամանակից շոք, մինչեւ որ կը Գայ Տերը (1Կր 4, 5):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Մի՛ կործանիր: Գաթի: Մի՛բաւ:**

² Մի՞ թէ իսկապէս արդարութիւն էք անում, հզօրներ,
մի՞ թէ ուղղութեամբ էք դատում մարդկանց.

³ ձեր սրտում արդէն նիւթում էք ոճիր,
երկրին տալիս էք բռնութեան վարչակարգ:

⁴ Չարագործները շեղուել են ծնունդից սկսած,
ստախօսներն այլասերուած են մանկութիւնից ի վեր.

⁵ նրանց թոյնը ի՞՞ թոյնի պէս է,
օճերի նման խցում են ականջները,

⁶ խուլ են մնում հմայիչի ձայնին,
նրա՝ ով դիւթում է հատօրէն:

⁷ Փշրիր, Աստուած, նրանց ատամները բերանի մէջ,
ջարդիր, Տէր, այս առիւծների երախները.

⁸ թող ցիրուցան լինեն ջրի նման, որ կաթում է,
թող թռուռնն ոտնակոխ եղած խոտի նման.

⁹ անհետանան՝ խխունջի նման սողալով,
վիժուածի նման՝ չտեսնեն արեւը:

¹⁰ Չոր փայտերին բռնող կրակից ակելի արագ,
թող նրանց պատի բարկութեան հուրը.

¹¹ արդարն ուրախութեամբ թող տեսնի իր վրէժը,
ամբարիշտի արեան մէջ լուսյ իր ոտքերը.

¹² թող ասուի. «Պտուղ կայ արդարի համար,
կայ մի Աստուած, որ արդարութիւն է անում երկրի վրայ»:



- Կցորդը. Տէրն ասաց ինչ. «Քեզ լսեալսն է իմ շնորհը :
 Իմ զօրո՞րն-ի՞նչն ը թացայայտուած է որկարո՞րն-ի՞նչն մէջ» (Հմմտ. 2Կր 12, 9):
- Կամ. Ո՛չ մահը, ո՛չ զօրո՞րն-ի՞նչն երբ, ո՛չ խո՞րո՞րն-ի՞նչն երբ
 չեն կարող անջաբել մեզ Աստուծոյ սիրո՞ց (Հմմտ. Հոմ 8, 38-39):
- Կամ. Ով քառասուն մէ է Աստուծոյ կամօ՞րն Ըստարչին ,
 Խողի՞ր կեանքը զնորա՞ն Ըստարչին (Հմմտ. 1Պտ 4, 19):
- Կամ. Մի՛ զարմացէ՛վ, որ աշխարհը յեզարսու՞մ է.
 մե՞նչ անցել են ի մահոյ կեանքի (Հմմտ. 1Յվհ 3, 13-14):

¹ Երգչախմբի ղեկավարի համար: Մի՛ կործանիր: Դատի: Մի՛բռն: Երբ Սատուղը մարդիկ ուղարկեց հսկելու նրա տունը, նրան սպանելու համար:

*² Ազատիր ինձ, Աստուած իմ, իմ թշնամիներից,
 պաշտպանիր ինձ վրաս յարձակողներից.*

*³ ազատիր ինձ ոճրագործներից,
 արիւնարբուներից փրկիր ինձ:*

*⁴ Ահա, որոգայթներ են լարում կեանքիս,
 անողոք նետում են իմ դէմ.
 առանց իմ կողմից վիրաւորանքի, ո՛չ մեղքի, ո՛չ յանցանքի,
⁵ վազում ու դարանակալում են, Տէր:*

*Արթնացիր, տես, ընդառաջ ել ինձ,
⁶ Տէր, տիեզերքի Աստուած, Աստուած Իսրայէլի.
 գարթնիր եւ հարուածիր կռապաշտներին առանց ողորմութեան,
 նրան՝ ով դաւաճանում է ստուրթեամբ:*

*⁷ Ամէն երեկոյ վերադառնում են, հաչալով՝ շների նման,
 թափառում են ամբողջ քաղաքով մէկ:*

*⁸ Նրանց բերանը նախատում է, նրանց շրթունքները դաշոյններ են,
 եւ ասում են. «Ո՞վ է մեզ լսում».*

*⁹ Բայց Դու, Տէր, ծաղրում ես նրանց,
 ծիծաղում ես բոլոր կռապաշտների վրայ:*

*¹⁰ Ես Քեզ եմ դիմում, գորութիւն իմ,
 այո՛, իմ ապաւէնն Աստուած է.*

*¹¹ Աստուծոյ սէրը կանխում է ինձ,
 Աստուած տալիս է ինձ տեսնել նրան՝ ով լրտեսում է ինձ:*

*¹² Բայց Դու, Տէր, մի՛ սպանիր նրանց,
 որպէսզի իմ ժողովուրդը չմոռանայ.
 Թող գորութիւնդ հպատակեցնի նրանց եւ ցիրուցան անի,
 Տէր, Դու ես մեր վահանը:*

*¹³ Հազիւ թէ բացում են իրենց բերանները՝ մեղանչում են.
 Թող խճճուած մնան իրենց գոռոզութեան մէջ,
 արտասանեցին անէծքներ ու կեղծիք:*

¹⁴ Ոչնչացրու նրանց զայրոյթով, ոչնչացրու եւ այլեւս թող չլինեն.
կ'իմանան՝ որ Աստուած իշխում է Յակոբի վրայ
եւ երկրի մէկ ծագից մինչեւ միւսը:

¹⁵ Ամէն երեկոյ վերադառնում են, հաչելով՝ շների նման,
թափառում են ամբողջ քաղաքով մէկ:

¹⁶ Ահա նրանք, որս են փնտռում,
գիշերով ոռնում են անյագ.

¹⁷ Բայց ես երգելու եմ Քո ուժը,
առաւօտեան՝ պանծացնելու եմ Քո սէրը:

Դու իմ համար ապաւէն եղար,
ապաստան՝ նեղութեան օրը.

¹⁸ ո՛վ զօրութիւն իմ, Քեզ եմ երգելու,
իմ ապաւէնը Աստուած է, Աստուած՝ որ ինձ սիրում է:



ԱՊՂԱՌՈՒ 60 [59]

Դու այժմ մերժում ես մեզ

Կցորդ. Աշխարհում գո՛ւ՛նէ նեղութիւններ ունէ՛լ,
Բայց վաճառէրո՛ւնցէ՛լ. ես յաղթեցի աշխարհին (Յվհ 16, 33):

Կամ. Հարկաւոր է, որ Քրիստոս թաղաւորի,
մինչեւ որ Իր ոտներէ ներժոյ կը գնի Իր թուր թշնամիներին (Հմմտ. 1Կր 15, 25):

Կամ. Տէրը ամբարիշտին կործանելու է Իր թերանի շնչով,
նրան ոչնչացնելու է Իր գաւաթեան յայտնութեան օրը (Հմմտ. 2Թս 2, 8):

Կամ. Փրկութիւն, փառք էս զօրութիւն մեր Աստուան.
արդար է՝ ճշմարիտ էն ՚Յրա վճիռները (Հմմտ. Յյտ 19, 1-2):

Կամ. Ալէլուիա, Իր թաղաւորութիւնն Իր յետէն առաւ,
Տէրը, մեր Աստուածը, Ամենակարողը (Յյտ 19, 6):

¹ Երգչախմբի ղեկավարի համար: «Վկայութեան շուշան»ի վրայ: Միջթամ: Դաւթի: Ուսուցանելու համար:

² Երբ դուրս եկաւ Երկու Գետերի Հովտի արամայեցիների եւ Սորոդի արամայեցիների դէմ: Երբ Յովարը վերադարձաւ եւ ջախջախեց Ադի Հովտի եղումացիներին. տասներկու հազար:

³ Ո՛վ Աստուած, Դու մերժեցիր մեզ եւ ցիրուցան արիւր,
զայրացել էիր, վերադարձիր մեր մօտ.

⁴ սասանեցիր երկիրը եւ ճեղքեցիր այն,
նորոգիր նրա կոտորուածքները, այն կործանւում է:

⁵ Դաժան փորձութեան ենթարկեցիր Քո ժողովրդին,
խմելու տուեցիր մեզ յիմարութեան գինին.

⁶ գէթ մի նշան տուր Քո հաւատացեալներին,
որպէսզի ազատուել կարողանան աղեղի հարուածներից.

⁷ որպէսզի փրկուեն Քո ընտրեալները,
փրկիր Քո աջով եւ պատասխանիր:



⁸ Աստուած խօսեց իր Սրբավայրում.
«Ես ցնծում եմ եւ բաժանում եմ Սիւքէմը,
կտոր կտոր եմ անում Սուքքոթի հովիտը:

⁹ Իմն է Գաղաադը եւ իմն է Մանասէն,
Եփրեմն իմ գլխի սաղաւարտն է,
Յուդան՝ հրամանատարութեանս գաւազանը:

¹⁰ Մովաբն այն աւազանն է, որում լուացւում եմ,
Եղոմի վրայ նետում եմ հողաթափս,
յաղթանակ եմ աղաղակում փղշտացիների վրայ»:

¹¹ Ո՞վ կ'առաջնորդի ինձ ամրացուած քաղաքից ներս,
ո՞վ կը տանի ինձ Եղոմ:

¹² Եթէ ոչ՝ Դու, ո՞վ Աստուած, որ այժմ մերժում ես մեզ
եւ այլեւս դուրս չես գալիս մեր զօրքերի հետ:

¹³ Նեղութեան մէջ օգնութեան հասիր մեզ, Աստուած,
մարդը փրկութիւն չի կարող տալ:

¹⁴ Աստծոյ հետ՝ մեծ գործեր կը կատարենք,
միայն Նա կը ջախջախի մեր թշնամիներին:



ԱՊՂԱՌՈՒ 61 [60]

Օր առ օր կը կատարեմ ուխտերդ

Կցորդ. Իմ Հօր փանը քաղուած օրէն-աննէր կան

Ե-Ես Գնուած էմ յեր Համար փեղ պարտաստելու- (Հմմտ. Յվհ 14, 2):

Կամ. Տէր, ո՞ւմ մօտ Գնանվ. աւա Գո-յաւ-ի փեմական կեանվի խօսվեր ունեա (Յվհ 6, 68):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Լարային գործիչների վրայ: Գայթի:**

² Լսիր, ո՞վ Աստուած, իմ աղաղակը,
ուշադրութիւն դարձրու իմ աղօթքին:

³ Նուաղած սրտով կանչում եմ Քեզ հեռաւոր երկրներից,
մի անհասանելի ժայռի վրայ բարձրացրու ինձ:

⁴ Այո, Դու ապաստան ես իմ համար,
մի ամրոց՝ հակառակորդի դիմաց:

⁵ Թող կարողանամ ես մշտապէս բնակուել յարկիդ ներքոյ,
պահպանիր ինձ թեւերիդ ստուերում:

⁶ Դու, ո՞վ Աստուած, ընդունում ես իմ իղձերը,
ահա՛ Անուանդ սիրահարների ճակատագիրը:

⁷ Մեսիա Թագաւորի օրերին օրեր աւելացրու,
նրա տարիները թող յաւիտենական դառնան:

⁸ Թող ընդմիջտ բազմի Աստծոյ երեսի առաջ,
չնորհն ու ճշմարտութիւնը թող պահպանեն նրան:

⁹ մշտատեւ երգելու եմ Քո Անունը,
օր առ օր կատարելու եմ ուխտերը:



ԱՂՂԱՌԱ 62 [61]

Աստծոյ առաջ բացէ՛ք ձեր սիրտը

Կցորդ. Ինչ մօտ եկե՛ք, Կո՛ւ՛՛՛ թուր յոգնաժներդ ու ճնշո՛ւ՛՛՛ներդ,
եւ ես յեղձանգրիսդ կը գամ (Մտթ 11, 28):

Կամ. Յոյսի Աստուածը թող ա՛մէն Կեսակ ուրախութիւններով ու խաղաղութեամբ
լիացնի յեղձանարժի Գործո՛ւմ (Հում 15, 13):

Կամ. Ձեր սիրտը թող շնորհով ու Կարգով, Կարգով ու Կարգով նաեւ ինչ (ՅվՏ 14, 1):

Կամ. Աստուծոյ խաղաղութիւնը կը պահպանի յեր սրտերը եւ յեր մտքերը
Քրիստոս Յիսուսի մէջ (Հմմտ. Փլպ 4, 7):

Կամ. Երբար Կարգով ու Կարգով յայտնութեան օրը
Աստուած իրաւական շնորհիւ կը Կարգով ըստ իր Գործերի (Հմմտ. Հում 2, 5-6):

¹ *Երգչախմբի ղեկավարի համար: «Իդուլթուն»ի վրայ: Սաղմոս: Գալթի:*

² Աստծոյ մէջ եմ ես հանգիստ գտնում միայն,
Նրանից է իմ փրկութիւնը.

³ միայն Նա է իմ վէմն ու իմ փրկութիւնը,
իմ ապաստանն է, ես չեմ սասանուի:

⁴ Մինչեւ ե՞րբ էք բոլորդ միասին յարձակուելու
մէկ մարդու դէմ՝ նրան կործանելու համար.
Կարծես թէ թեքուած մի պատ լինէր,
պարիսպ՝ որ քանդուում է:

⁵ Ինձ վար գցելու մասին են միայն մտածում,
սուտ խօսելիս հաճոյք են ստանում.
Խօսելիս՝ շրթունքներով օրհնում են,
սրտում, մինչդեռ, անիծում:

⁶ Միայն Աստծոյ մէջ հանգիստ փնտրիր, հոգի իմ,
Նրանից է իմ փրկութիւնը.

⁷ միայն Նա է իմ վէմն ու իմ փրկութիւնը,
իմ ապաստանն է, ես չեմ սասանուի:

⁸ Ես իմ փրկութիւնը եւ իմ փառքը գտնում եմ
իմ Աստծոյ մօտ.
Աստծոյ մօտ է իմ ամրացուած ժայռը,
իմ ապահով ապաստարանը:



⁹ Ձեր վստահութիւնն ընդմիշտ Նրա վրայ հաստատեցէք,
դուք՝ Իր ժողովուրդը.
Նրա առջեւ բացէ՛ք ձեր սիրտը,
մեր ապաւէնն Աստուած է:

¹⁰ Աղամի որդիներն ա՛յլ բան չեն, եթէ ոչ՝ մի շունչ,
մահկանացուն մի խաբկանք է.
բոլորը միասին նժարին դրուելով՝
սլանում են վեր:

¹¹ Յոյսներդ բռնութեան վրայ մի՛ դրէք,
ձեր շահերով մի՛ խաբուէք.
սրտներդ հարստութիւններին մի՛ կապէք,
նոյնիսկ երբ աճում ու աւելանում են:

¹² Աստուած մի խօսք արտասանեց,
ես երկուսը լսեցի.
Աստծուն է պատկանում ուժը,

¹³ Քեզ, Տէր, շնորհը.
եւ Դու կը հատուցես իւրաքանչիւր մարդու
իր իսկ գործերի համաձայն:



ԱՂԱՄՈՒ 63 [62]

Արշալոյսից սկսած փնտռում եմ Քեզ

Կցորդ. Ո՛վ շարասի է, թող Գայ ե- յրիօրէն վերցնի կեանքի ջո-րը (Հմմտ. Յյտ 22, 17):

Կամ. Դու-ն սերտմ է՛ Քրիստոսին առանց Մրան Կեսաթ լինելու-
եւ առանց Մրան Կեսնելու՝ Հասարում է՛ Մրան (Հմմտ. 1 Պտ 1, 8):

Կամ. Ամենում եմ մեկնել՝ Քրիստոսի Հեղ լինելու- Համար (Հմմտ. Փլպ 1, 23):

¹ **Մաղնու: Գալթի: Երբ Յուդայի անապատում էր:**

² Ո՛վ Աստուած, արշալոյսից սկսած ես Քեզ եմ փնտռում,
հոգիս ծարաւի է Քեզ, Աստուած իմ.

Քեզ է փափաքում մարմինս
անապատ երկրում, առանց ջրի ցամաքած.

³ այս իսկ պատճառով, հայում եմ Քեզ Սրբավայրում,
Քո ուժը եւ Քո փառքը տեսնելու համար:

⁴ Քո սէրն աւելի արժէ՛ քան կեանքը,
Դու ես գովասանքն իմ շուրթերի.

⁵ եւ ես օրհնելու եմ Քեզ, քանի դեռ ապրում եմ,
Քո Անուանն եմ բարձրացնելու իմ ձեռքերը.

⁶ յագենալու եմ, ինչպէս խնջոյքի ժամանակ,
բերանս գովելու է Քեզ ուրախութեամբ:

⁷ Անկողնուս վրայ ես յիշում եմ Քեզ,
գիշերային յսկումներիս ընթացքում խօսում եմ Քո հետ.

⁸ այո՛, Դու ես իմ օգնութիւնը,
ցնծում եմ թեւերիդ հովանու ներքոյ.

⁹ իմ էութիւնը յարում է Քեզ,
աջդ գրկում է ինձ եւ նեցուկ կանգնում:

¹⁰ Բայց նրանք՝ ովքեր փնտռում են իմ կործանումը,
իջնելու են երկրի խորութիւններն ի վար:

¹¹ սրի քմահաճոյքին յանձնուած,
դառնալու են որս՝ բորենիների համար:

¹² Բայց Մեսիա Թազաւորն ուրախանալու է Աստուծոյ մէջ,
ով ճշմարիտն է խօսում՝ փառաւորուելու է:
որովհետեւ փակուելու է բերանը նրանց՝
ովքեր սուտ ու կեղծիք են խօսում:



ԱՊՂԱՌՈՒ 64 [63]

Պանծանում են սրտով ուղիղները

Կցորդ. Մարդկային սրտից էն թխում՝ չար մտածումները:

սրանի վէն՝ որ ապականում էն մարդուն (հմմտ. Մտթ 15, 19-20):

կամ. Աստուծոյ վերջինն արեց Իր Բազմութիւնը,

ցրեց Հաարարներին իրենց սրտերի խորհուրդներում (հմմտ. Ղկս 1, 51):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Սաղմոս: Ռալթի:**

² Լսիր, ո՛վ Աստուած, լացիս աղաղակը,
թշնամուց պաշտպանիր կեանքս:

³ Հեռացրու ինձ չարագործների դաւադրութիւնից,
նրանցից՝ ովքեր կազմակերպում են չարիքը:

⁴ Դաշոյնի նման սրում են իրենց լեզուն,
դառն խօսքեր են նետում նիզակների նման:

⁵ գաղտնի հարուածելու համար անմեղին,
յանկարծակի հարուածում են նրան առանց երկիւղի:

⁶ Հետեւում են չարամիտ ծրագրերի,
որոշում են դարաններ լարել,
միմեանց միջեւ ասում են. «Ո՞վ է տեսնում դրանք»:

⁷ Խնամքով պատրաստում են ոճիրները,
իրագործում են իրենց ծրագրերից իւրաքանչիւրը,
նրանց սիրտն ապականուած է ու անթափանցելի:

⁸ Բայց Աստուած նիզակով հարուածում է նրանց,
յանկարծակի զգում են վէրքը:

⁹ Իրենց իսկ լեզուն կործանելու է իրենց,
ով նրանց տեսնելու է՝ գլուխ է թափահարելու:

¹⁰ Իսկ մարդիկ բռնում են երկիւղով,
հռչակում են Աստուծոյ գործը,
սովորում են կշռադատել Նրա գործելակերպը:

¹¹ Հաւատացեալն ուրախանում է Տիրոջ մէջ,
ապաստան է գտնում Նրա մօտ,
պանծանում են բոլոր սրտով ուղիղները:



Կցորդ. Ահա , պարբերաբար երբ իմ խնջոյ՛ւն .

ամէն բան պարբերաբար է , եկե՛ք Հարսանի՛վի (Հմմտ. Մտթ 22, 4):

Կամ. Երանի նրանց՝ ովքեր Հրա-երո-ելեն Գառան Հարսանեաց խնջոյ՛վին (Յյտ 19, 9):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Մաղմոս: Դաւթի: Երգ:**

² Լռութիւնը Քո համար գովասանք է,
ո՛վ Աստուած, Սիրոնում.
Քո համար են պահպանւում ուխտերը,

³ Դու լսում ես աղօթքը:

Դէպի Քեզ է դալիս մարմնեղէն ամէն էակ
մեղքի ծանրութեամբ.

⁴ մեր յանցանքները մեզնից աւելի ուժեղ են,
բայց Դու ջնջում ես դրանք:

⁵ Երանելի է նա՛ ում ընտրում ես ու հրաւիրում
բնակուելու Քո կողքին.
յագենալու ենք Քո տան բարիքներով,
բարիքներով Քո սուրբ բնակավայրի:

⁶ Արդարութեանդ համաձայն՝ պատասխանում ես մեզ հրաշքներով,
ո՛վ Աստուած, փրկութիւն մեր,
յոյս երկրի բոլոր ծագերի
եւ հեռաւոր ծովերի:

⁷ Դու հաստատուն ես դարձնում լեռները,
ուժով ու զօրութեամբ պատուած.

⁸ եւ հանդարտեցնում ես ծովի ու ալիքների շառաչը,
խռովութիւնը հեթանոսների:

⁹ Ապշում են հեռաւոր բնակիչները
ի տես Քո նշանների.
արեւելքի ու արեւմուտքի դռներին
Դու բերկրանք ես առաջացնում:

¹⁰ Դու այցելում ես երկրին եւ ոռոգում ես այն,
լիացնում ես բարիքներով.
Աստծոյ գետը առատօրէն լի է ջրով,
պատրաստում ես հունձքը:

Անձրեւներով պատրաստում ես երկիրը,

¹¹ ոռոգում ես նրա ափոսները.
հարթեցնում ու փափկացնում ես հողակոշտերը,
օրհնում ես նրա ծիւերը:

¹² Քո բարիքներով պսակում ես տարին,
որտեղով Դու անցնում ես՝ բխում է առատութիւնը,

¹³ ցայտում են անապատի օազիսները:

Բլուրները հագնում են ցնծութիւն,
¹⁴ պուրակները ծածկում են երամակներով,
հովիտները զարդարում են հունձքով,
ամէն բան երգում է եւ ցնծում ուրախութեամբ:



ՍԱՂԱՌՈՒ 66 [65]

Եկէ՛ք եւ տեսէ՛ք Աստծոյ հրաշքները

- Կցորդ.** Մէկ պահ միայն փոքր շնորհներն են թեթեւութիւնը
մեր Հասարակացութեան մէջ անշափելի, յատկապէս անհասկանալի (Հմմտ. 2Կր 4, 17):
- Կամ.** Աստուծոյ Ինչքը, կարճատեւ փառապանքից յետոյ,
կը հաստատուի յետոյ, կը դարձնի յետոյ փոքր անասան (Հմմտ. 1Պտ 5, 10):
- Կամ.** Ով երկնում է Աստուծոյ եւ կարող է Նոր կամէ՛ք,
մենք զի փոքր է՝ որ Աստուծոյ Լոյսն է նրան (Հմմտ. Յվհ 9, 31):
- Կամ.** Այն ամէնք՝ որ խնդրում են աղօթքում,
Հաստատուել՝ որ արդէն իսկ սրտերը կ'ըլին (Հմմտ. Մրկ 11, 24):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար:** Երգ: Սաղմոս:

Աղաղակեցէք առ Աստուած, բոլոր երկրներ,
² երգեցէք Նրա Անուան փառքը,
դաւանեցէք Նրա փառքը գովասանքներով:

³ Ասացէք Աստծուն. «Հրաշալի են Քո գործերը,
Քո ուժի ներքոյ կ'ըլնում են թշնամիները.

⁴ ամբողջ երկիրը երկրպագում է Քո առաջ,
երգում է Քեզ, երգում է Քո Անուանը»:

⁵ Եկէ՛ք եւ տեսէ՛ք Աստծոյ հրաշքները,
զարմանահրաշ է իր վարմունքը մարդու նկատմամբ.

⁶ Ժողով հաստատուն հողի փոխեց,
ոտքով անցան գետը:

Այս իսկ պատճառով, ուրախանանք Նրանում,

⁷ իր ուժի մէջ Նա տիրում է միշտ.

Նրա աչքերը զննում են հեթանոսներին,
Նրա դէմ գլուխ չեն բարձրացնում ապստամբները:

⁸ Ո՛վ ժողովուրդներ, օրհնեցէ՛ք մեր Աստծուն,
հնչեցրէ՛ք Նրա գովասանքը.

⁹ Նա է՝ որ վերստին մեզ կեանք է տալիս
եւ մեր ոտքերը վերապահում է անկումից:

¹⁰ Ո՛վ Աստուած, մեզ փորձութեան ենթարկեցիր,
հնոցից անցկացրիր մեզ, ինչպէս անցկացնում են արծաթը.

¹¹ Դու ես, որ առաջնորդեցիր մեզ գերութեան
եւ ծանրութիւն կախեցիր մեր կողերին:

¹² Կամեցար, որ մարդիկ ձիերի նման
անցնէին մեր գլուխների վրայով.
մտանք կրակի ու ջրի մէջ,
բայց յետոյ հանեցիր մեզ ազատութեան:



¹³ Մտնելու եմ յարկերիցդ ներս ողջակէզներով,
պահպանելու եմ Քեզ խոստացուած ուխտերը.

¹⁴ շրթունքներիս արտասանած ուխտերը,
բերանիս արտասանածը տրտմութեան ժամանակ:

¹⁵ Մի կատարեալ ողջակէզ կը ներկայացնեմ Քեզ,
խոյերի բուրմունքի հետ միասին,
կ'ընծայեմ Քեզ հորթեր ու այծեր:

¹⁶ Եկէք, ունկնդրէք, Աստուծոն երկրպագողներ,
ձեզ կը պատմեմ այն՝ ինչ արեց իմ համար.

¹⁷ երբ աղաղակս դէպի Ինքը բարձրացրի,
բերանս արդէն երգում էր Նրա գովասանքը:

¹⁸ Եթէ կասկածը եղած լինէր իմ սրտում,
Տէրը չէր լսի.

¹⁹ մինչդեռ Աստուած լսեց ինձ,
լսեց ու ընդունեց աղօթքի իմ աղաղակը:

²⁰ Թող օրհնեալ լինի Աստուած.

Նա չմերժեց իմ աղօթքը,
Նա Իր սէրը չհեռացրեց ինձնից:



ԱՂՂԱՌԱ 67 [66]

Ժողովուրդները թող գովեն Քեզ, Աստուած

Կցորդ. Օրհնեալ են դու Կանանց մէջ եւ օրհնեալ է որովայնիդ պարուրը (Ղկս 1, 42):

Կամ. Օրհնեալ է Աստուած եւ Հայրը,

որ օրհնեց մեզ Ընդհանուր Բուրմունքով Ինքիս հետ (Հմմտ. Եփս 1, 3):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Լարային գործիչների վրայ:
Սաղմոս: Երգ:**

² Թող Աստուած շնորհ անի մեզ եւ օրհնի մեզ,
մեր վրայ լուսաւորի Իր երեսը.

³ երկրի վրայ կը ճանաչուի Քո ճանապարհը,
Քո պարգեւած փրկութիւնը՝ բոլոր ազգերի մօտ:

⁴ Ժողովուրդները թող գովեն Քեզ, Աստուած,
թող գովեն Քեզ բոլոր ժողովուրդները:

⁵ Թող ուրախանան եւ երգեն ազգերը,
որովհետեւ Դու կառավարում ես ժողովուրդներին արդարութեամբ,
երկրի վրայ առաջնորդում ես ազգերին:

⁶ Ժողովուրդները թող գովեն Քեզ, Աստուած,
թող գովեն Քեզ բոլոր ժողովուրդները:

⁷ Երկիրը տուեց իր պտուղը,
մեզ օրհնում է Աստուած, մեր Աստուածը.

⁸ Թող մեզ օրհնի Աստուած եւ թող Նրան երկրպագի
երկիրն իր ամբողջ տարածութեամբ:



ԱՄՂԱՌԱ 68 [67]

Պարգևների անձրևի էիր հեղում, Աստուած

Կցորդ. Մեծ զօրութեամբ Առաժեռակները վկայում էին Տեր Յիսուսի յարութիւնը (Գրծ 4, 33):

Կամ. Աճապարանձով ճեռանալով Գերեզմանից,
կանայժ վաղեցին անտիպի փառաբանումը (Հմմտ. Մտթ 28, 8):

Կամ. Համբառանալով երկինժ, Իր ճեպ փարաբանարկեալներին,
պարգեւներ քաջից մարդկանց (Եփս 4, 8):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: Դալթի: Սաղմոս: Երգ:**

² Թող ոտքի ելնի Աստուած, թող ցրուեն իր թշնամիները,
հակառակորդները թող փախչեն իր երեսից,

³ անհետանան ինչպէս ծուխը քամու առաջ:

Ինչպէս հալուում է մոմը կրակի առաջ,
թող Աստուծոյ առաջ կորստեան մատնուեն ամբարիշտները.

⁴ իսկ արդարները առատօրէն լցուեն զուարթութեամբ,
Աստուծոյ առաջ ցնծան ուրախութեամբ:

⁵ Երգեցէք Աստուծուն, շարականներ երգեցէք Նրա Անուանը,
բացէք ճանապարհը Նրա առաջ՝ ով յառաջանում է անապատում,
ցնծացէք Նրա համար. Նրա Անունը Տէր է:

⁶ Հայր որբերի եւ պաշտպան այրիների,
Աստուած բնակուում է իր Սրբութեան վայրում.

⁷ միայնակեացներին Աստուած պարգեւում է մի տուն,
արգելափակուածներին դուրս է հանում բանտից,
միայն ապստամբներն են մնում չոր երկրում:

⁸ Երբ դուրս էիր գալիս Քո ժողովրդի առաջ,
երբ յառաջանում էիր անապատում, ո՛վ Աստուած.

⁹ դողաց երկիրը, խռովուեց երկիրնքը,
Աստուծոյ առաջ, Սինայի Աստուծոյ,
Աստուծոյ առաջ, Իսրայէլի Աստուծոյ:

¹⁰ Պարզեւների մի անձրեւ էիր հեղում, Աստուած,
կազդուրելով Քո ժառանգութիւնը, որ նուաղում էր.

¹¹ Քո ժողովուրդը մի օթեւան գտաւ, Աստուած,
Քո կողմից պատրաստուած՝ ի սէր աղքատի:



¹² Տէրը մի բարի լուր է տալիս,
բազմաթիւ են շարքերը աւետարանիչների.

¹³ «Թագաւորներն ու բանակները փախչում են, փախչում,
բանակատեղում բաժանում է աւարը:

¹⁴ Ինչո՞ւ էք դուք հանգստանալու մնում,
երբ Աղաւնին արծաթապատում է Իր թեւերը
եւ Նրա փետուրները ծածկում են ոսկով.

¹⁵ Երբ Հզօրը ցիրուցան է անում թագաւորներին
եւ ձիւն է տեղում խաւար լեռան վրայ»:

¹⁶ Բարձր լեռը Աստծո՞յ լեռն է,
բարձր լեռը մի հպարտ լեռ է.

¹⁷ Ինչո՞ւ էք նախանձում, ո՞վ հպարտ լեռներ,
Աստուծոց որպէս օթեւան ընտրուած լեռանը,
ուր Տէրը բնակուելու է յաւէտ:

¹⁸ Աստծոյ զօրութիւնները հազարաւոր են ու բիւրապատիկ,
Տէրը Սինայից գալիս է Իր Սրբավայր.

¹⁹ բարձրացար վերեւ, տանելով գերիներ,
մարդկանցից ստացար պարզեւներ.
պարզեւներ ստացար նաեւ ապստամբներից
եւ հաստատեցիր բնակավայրդ, Տէր Աստուած:

²⁰ Յաւէտ օրհնեալ է Տէր Աստուած,
Նա մեզ բերում է փրկութիւնը.

²¹ Աստուած մեզ համար մի Աստուած է՝ որ փրկում է,
Տէր Աստուած իշխանութիւն ունի մահուան վրայ.

²² բայց Աստուած ջախջախում է Իր թշնամիների գլուխները,
գոռոզ գլուխը, որ ապրում է ոճիրի մէջ:

²³ Ասում է Տէրը. «Նրանց ետ կը դարձնեմ բարձրունքներից,
նրանց ետ կը դարձնեմ ծովի անդունդներից.

²⁴ որպէսզի ոտքերդ նրանց արեան մէջ լուսա
եւ քո շները լափեն թշնամիներին»:



²⁵ Ո՞վ Աստուած, ահա երեւում է Քո շքախումբը,
Թագաւորի՝ իմ Աստծոյ շքախումբը Սրբավայրում է.

²⁶ առջեւում՝ երգիչները, ետեւում՝ կիթառահարները,
պատանի աղջիկների միջեւ, որ հնչեցնում են թմբուկները:

²⁷ Հաւաքոյթում օրհնեցէք Աստուծոն,
Տէրը Իսրայէլի աղբիւրն է.

²⁸ այնտեղ է Բենիամինը, ամենափոքրը, որ առաջնորդում է նրանց,
Յուդայի գլխաւորներին ու նրանց բանակներին,
Զաբուղոնի ու Նեփթաղիմի իշխաններին:

²⁹ Ո՛վ Աստուած, զօրութեանդ նշաններ տուր,
Հաստատիր, ո՛վ Աստուած, այն ամէնը՝ որ արել ես մեր համար.

³⁰ տաճարիդ համար, Երուսաղէմում,
Թագաւորները Քեզ ընծաներ կը բերեն:

³¹ Սանձիր գազանին, որ յարձակում է,
աւագակախմբին, որ տիրում է ժողովուրդների վրայ,
որ երկրպագում է արծաթէ կուռքերի առաջ.
ցիրուցան արա ժողովուրդներին, որոնք սիրում են պատերազմը,

³² եւ կը գան Եգիպտոսի մեծերը,
Եթովպիան իր ձեռքերը կը տարածի դէպի Աստուած:

³³ Երգեցէք Աստուծոն, երկրի թագաւորութիւններ,
օրհնութիւններ երգեցէք Տիրոջը.

³⁴ Նա նժոյգին է հեծնում յաւիտենական երկնքում,
հնչեցնում է իր հզօր ձայնը:

³⁵ Ճանաչեցէք Աստուծոյ ուժը.

Նրա պայծառ փայլը Իսրայէլի վրայ է,
Նրա զօրութիւնը՝ երկնային բարձրունքներում:

³⁶ Ահաւոր է Աստուած իր Սրբավայրում,

Նա է Իսրայէլի Աստուածը.
Իր ժողովրդին տալիս է ուժ եւ զօրութիւն,
Թող միշտ օրհնեալ լինի Աստուած:



ԱՊՂԱՌԱ 69 [68]

Ընկղմում եմ ջրերի անդունդներն ի վար

Կցորդ. Քացախը խմելուց յետոյ, Յիսուս ասաց.

« Ըմէն քան կարարո՞ւած է » (Հմմտ. Յվհ 19, 30):

Կամ. Կարարո՞ւեց նրանց օրէնքի խօսքը.

« Ըսանց պարճաւորի արեցին ինչ » (Հմմտ. Յվհ 15, 25):

Կամ. Ըսարո՞ւած Տէր է՝ Քրիստոս կարգեց այն Յիսուսին, որին դո՛ւ խաչեցի՛ն (Գրծ 2, 36):

¹ **Երգչախմբի ղեկավարի համար: «Շուշաններ»ի վրայ: Դաւթի:**

² Փրկիր ինձ, Աստուած,
ջուրը մինչեւ կոկորդոս է հասնում.

³ ընկնում եմ անյատակ ցեխի մէջ,
ոչինչ ինձ չի կասեցնում.

ընկղմում եմ ջրերի անդունդներն ի վար,
յորձանքը կլանում է ինձ:

⁴Նուաղել եմ աղաղակներիս պատճառով,
կոկորդս ցորացել է.
աչքերս սպառուել են
իմ Աստծոյ սպասման մէջ:

⁵Գլխիս մազերից աւելի բազմաթիւ են
ինձ առանց պատճառի ատողները.
առջեւումս հզօր հակառակորդներ կան,
զրպարտող թշնամիներ:

Բայց ես ոչինչ չեմ գողացել,
ի՞նչ պէտք է վերադարձնեմ.

⁶Աստուած, Դու ճանաչում ես իմ յիմարութիւնը,
յանցանքներս անյայտ չեն Քեզ:

⁷Ով յուսացել է Քեզ, թող իմ պատճառով չկարմրի,
Տէր, տիեզերքի Աստուած.
Իմ պատճառով թող չամաչի՝ ով փնտռում է Քեզ,
Աստուած Իսրայէլի:

⁸Քո համար է՝ որ կրում եմ նախատինքը,
անարգանքները ծածկում են երեսս.

⁹եղբայրներիս համար մի օտարական եմ,
մի անծանօթ՝ մօրս որդիների համար.

¹⁰տանդ նախանձախնդրութիւնը ուտում է ինձ,
ով Քեզ նախատում է՝ նախատում է նաեւ ինձ:

¹¹Եթէ արտասւում եմ եւ ծոմ պահում,
ծաղրանքի առարկայ եմ դառնում.

¹²Եթէ ապաշխարութեան զգեստ եմ հագնում,
նրանց համար առակ եմ դառնում.

¹³դռների սեմին մեկնաբանութիւններ են կատարում իմ մասին,
խմելու նստած՝ ծաղրում են ինձ:



¹⁴Բայց ես աղօթքի մէջ եմ մնում Քո առաջ,
Տէր, շնորհի ժամանակ է.
մեծ սիրոյդ համաձայն՝ պատասխանիր ինձ, Աստուած,
ըստ պարգեւածդ փրկութեան հաւատարմութեան:

¹⁵Հանիր ինձ ցեխից, որպէսզի չընկղմուեմ,
ազատիր ինձ ատողներից, ջրերի անդունդից.

¹⁶յորձանքը չքշի տանի ինձ, ջրապտոյտը չկլանի ինձ,
անդունդի բերանը չփակուի իմ վրայ:

¹⁷Տէր, պատասխանիր, Քո սէրը բարութիւն է,
հայեացքդ վրաս դարձրու ըստ Քո մեծ ողորմութեան.

¹⁸երեսդ մի՛ թաքցրու Քո ծառայից,
ծայր աստիճանի եմ հասել, շուտով, պատասխանիր ինձ.

¹⁹մօտեցիր ինձ եւ ազատիր ինձ,
փրկիր ինձ իմ թշնամիներից:

²⁰ Դու գիտես իմ շփոթութիւնը, իմ անարգութիւնն ու իմ ամօթը,
իմ նեղիչները բոլորն էլ Քո առջեւ են.

²¹ նախատինքը փշրում է սիրտս,
հիւանդութիւնս դառնում է անբուժելի:

Յուսացի կարեկցանք գտնել, բայց ի դուր,
մխիթարիչներ, բայց չգտայ ոչ ոք.

²² Լեղի են տալիս ինձ որպէս կերակուր,
մինչ ծարաւ եմ՝ քացախ են տալիս խմելու:

²³ Նրանց սեղանը թող մի որոգայթ դառնայ,
նրանց խնջոյքները մի ծուղակ լինեն.

²⁴ նրանց աչքերը, կուրացած, թող չտեսնեն,
ընդմիշտ փշրիբ նրանց կողերը:

²⁵ Նրանց վրայ թափիր Քո զայրոյթը,
թող նրանց հասնի բարկութեանդ հուրը.

²⁶ նրանց բնակութիւնը թող անապատ դառնայ,
ոչ ոք չհիւրընկալուի նրանց վրաններում:

²⁷ Քանի որ հետապնդում են նրան՝ ում Դու ապտակում ես,
հաշուելով վէրքերը նրա՝ ում Դու հարուածում ես.

²⁸ վերագրիր նրանց ոճիր ոճիրի վրայ
եւ թող երբեք ներում չստանան Քեզնից.

²⁹ թող ջնջուեն կեանքի գրքից,
չարձանագրուեն արդարների շարքում:



³⁰ Ինչ վերաբերում է ինձ, ստորացածս ու չարչարուածս,
ինձ կրկին կը բարձրացնի փրկութիւնդ, Աստուած.

³¹ գովելու եմ Աստուծոյ Անունը երգերով,
մեծարելու եմ Նրան երախտիք մատուցելով.

³² Տէրը հաճոյքով կ'ընդունի այս ընծան,
աւելի՛ քան մի հորթի՝ մաքուր զոհի ընծայումը:

³³ Խոնարհները թող տեսնեն եւ ուրախ լինեն,
Աստուծոն փնտռողներին՝ կեանք եւ զուարթութիւն.

³⁴ որովհետեւ Տէրը լսում է աղքատներին,
չի արհամարհում նրան՝ ով Իրեն է յարում:

³⁵ Թող փառաբանեն Նրան երկինքն ու երկիրը,
ծովերը եւ ինչ որ նրանցում շարժում է.

³⁶ որովհետեւ Աստուած փրկելու է Սիոնը
եւ վերականգնելու է Յուդայի քաղաքները,
դրանք դարձնելու է մի բնակավայր, տիրոյթ,

³⁷ ժառանգութիւն՝ իր ծառաների սերնդի,
օթեւան՝ իր Անուան սիրահարների համար:

